Հավելված N 1
ՀՀ կառավարության 2024 թվականի
հունիսի 6-ի N 846 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՒՄ ԱՆԿԱԾ, ՈՉՆՉԱՑՎԱԾ ԿԱՄ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՍՊԱՆԴԻ (ՀԱՐԿԱԴԻՐ ՄՈՐԹԻ) ԵՆԹԱՐԿՎԱԾ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը տարածվում է գյուղատնտեսական կենդանիների (այսուհետ՝ կենդանիներ) վարակիչ՝ կարանտինային և հատուկ վտանգավոր հիվանդությունների (այսուհետ՝ անասնահամաճարակ) հետևանքով անկած, ոչնչացված կամ սանիտարական սպանդի (հարկադիր մորթի) ենթարկված կենդանիների սեփականատերերին ցուցաբերվող փոխհատուցման հետ կապված հարաբերությունների վրա:

2. Փոխհատուցումը տրամադրվում է անասնահամաճարակների բռնկման հետևանքով՝ գյուղատնտեսական կենդանիների անկման կամ անասնահամաճարակների տարածման կանխարգելման նպատակով վարակված կամ վարակման անմիջական սպառնալիքի ենթակա կենդանիների սանիտարական սպանդի կամ ոչնչացման դեպքերում:

3. Անասնահամաճարակի հետևանքով անկած, ոչնչացված կամ սանիտարական սպանդի (հարկադիր մորթի) ենթարկված գյուղատնտեսական կենդանիների սեփականատերերին փոխհատուցումը տրամադրվում է սույն կարգով՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված միջոցների հաշվին:

4. Անկած գյուղատնտեսական կենդանիները, ինչպես նաև դրանցից ստացված հումքը և մթերքը ենթակա են ոչնչացման:

5. Անկած, ոչնչացված կամ սանիտարական սպանդի (հարկադիր մորթի) ենթարկված գյուղատնտեսական կենդանիների սեփականատերերին փոխհատուցման

տրամադրման կազմակերպման համար Հայաստանի Հանրապետության կառավարությունը հաստատում է հանձնաժողովի կազմը (այսուհետ՝ հանձնաժողով)՝ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) ներկայացմամբ:

6. Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են՝

1) Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարը (հանձնաժողովի նախագահ).

2) Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարը կամ տեղակալը (հանձնաժողովի նախագահի տեղակալ).

3) Մննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ տեսչական մարմին) ղեկավարը կամ տեղակալը.

4) հասարակական կազմակերպության ներկայացուցիչը (համաձայնությամբ):

7. Հանձնաժողովի գործառույթներն են՝

1) տվյալների շտեմարանի պահպանումը և տվյալների վերլուծությունը.

2) շուկայական արժեքով պայմանավորված անկած, ոչնչացված կամ սանիտարական սպանդի ենթարկված գյուղատնտեսական կենդանիների սեփականատերերին ցուցաբերվող փոխհատուցման գումարի չափի վերաբերյալ առաջարկության ներկայացում հանձնաժողովի նախագահին.

3) սեփականատերերին տրամադրված փոխհատուցման գործընթացի հրապարակայնության և թափանցիկության ապահովումը:

8. Հանձնաժողովի նախագահը պարբերաբար, սակայն ոչ ուշ, քան 15 աշխատանքային օրը մեկ անգամ, Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ է ներկայացնում հաշվետվություն՝ 7-րդ կետի դրույթների շրջանակներում իրականացված աշխատանքների վերաբերյալ:

9. Հայաստանի Հանրապետությունում անասնահամաճարակների բռնկման ու տարածման կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացման, անասնահամաճարակի հետևանքով անկած, ոչնչացված կամ սանիտարական սպանդի (հարկադիր մորթի) ենթարկված գյուղատնտեսական կենդանիների

սեփականատերերին ցուցաբերվող օժանդակության աշխատանքները համակարգելու և իրականացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության մարզերում ստեղծվում է մարզային հանձնաժողով (այսուհետ՝ մարզային հանձնաժողով):

10. Մարզային հանձնաժողովն ստեղծվում է նախարարության և համապատասխան մարզպետի համատեղ հրամանով՝ անասնահամաճարակ արձանագրելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:

11. Մարզային հանձնաժողովի կազմում ընդգրկվում են՝

1) տեսչական մարմնի մարզային կառույցների աշխատողներ.

2) համապատասխան մարզպետների աշխատակազմերի և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատողներ (համաձայնությամբ).

3) «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) մարզային մասնաճյուղերի համաճարակաբաններ, անասնաբույժներ.

4) տնտեսավարողներ (համաձայնությամբ):

12. Մարզային հանձնաժողովը ղեկավարում է համապատասխան մարզպետը:

13. Մարզային հանձնաժողովի հիմնական գործառույթներն են՝

1) ֆիզիկական և իրավաբանական անձանց պատկանող գյուղատնտեսական կենդանիների ցանկի ճշգրտումը և տվյալների շտեմարանի ստեղծումը, որը պետք է ներառի՝

ա. ֆիզիկական անձի դեպքում՝ սեփականատիրոջ անունը, ազգանունը, հայրանունը, հասցեն, անձնագրի պատճենը, հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստը, իսկ իրավաբանական անձի՝ ընկերության անվանումը, գտնվելու վայրը և տնօրենի անունը, ազգանունը, հայրանունը, անձնագրի պատճենը, կոնտակտային տվյալները, էլեկտրոնային փոստը,

բ. անկած, ոչնչացված կամ սանիտարական սպանդի ենթարկված գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը՝ ըստ նույնականացման համարի (առկայության դեպքում), կենդանատեսակի, սեռահասակային խմբի, քաշի,

գ. առկայության դեպքում՝ լաբորատոր փորձաքննության եզրակացությունը, կամ կասկածվող հիվանդության անվանումը,

դ. արոտային շրջանի դեպքում՝ անկած, ոչնչացված կամ սանիտարական սպանդի ենթարկված գյուղատնտեսական կենդանիների արածեցման տարածքը.

2) տվյալների շտեմարանի տրամադրումը հանձնաժողովին.

3) պարբերաբար, սակայն ոչ ուշ, քան 15 աշխատանքային օրը մեկ անգամ կազմում է ակտ՝ սույն կետի դրույթների շրջանակներում իրականացված աշխատանքների վերաբերյալ և ներկայացնում է հանձնաժողովին.

4) անասնահամաճարակների մասին մարզում անասնապահությամբ զբաղվող ֆիզիկական և իրավաբանական անձանց շրջանում բացատրական աշխատանքների իրականացումը:

14. Մարզային հանձնաժողովը կազմակերպության մարզային մասնաճյուղերի համաճարակաբաններից ընտրում է քարտուղար, որի կողմից հավաքագրվում են սույն կարգի 13-րդ կետով պահանջվող տեղեկությունները, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև այլ տեղեկություններ և կազմում է ընթացիկ և վերջնական ակտեր:

15. Գյուղատնտեսական կենդանիների ոչնչացման կամ սանիտարական սպանդի (հարկադիր մորթի) իրականացումը, անկումն արձանագրելուց հետո՝ 7 աշխատանքային օրվա ընթացքում մարզային հանձնաժողովի նախագահը ընթացիկ ակտի մեկ օրինակը ներկայացնում է նախարարությանը:

2. ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻՆ ՑՈՒՑԱԲԵՐՎՈՂ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒՄԸ

16. Անկած, ոչնչացված կամ սանիտարական սպանդի (հարկադիր մորթի) ենթարկված գյուղատնտեսական կենդանիների սեփականատերերին փոխհատուցում տրամադրելու նպատակով մարզային հանձնաժողովի կողմից կազմվում է վերջնական ակտ՝ 3 օրինակից:

17. Մարզային հանձնաժողովը սույն կարգի 13–րդ կետով սահմանված պահանջվող ամբողջ տեղեկությունը, ինչպես նաև վերջնական ակտի մեկ օրինակը և ակտի ամփոփման արդյունքները՝ անկած, ոչնչացված կամ սանիտարական սպանդի (հարկադիր մորթի) ենթարկված գյուղատնտեսական կենդանիների

վերաբերյալ ներկայացնում է նախարարությանը՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում:

18. Նախարարությունը 5 աշխատանքային օրվա ընթացքում մարզային հանձնաժողովի նախագահի կողմից տրամադրված ակտերի մեկ օրինակը և ակտի ամփոփման արդյունքները ներկայացնում է հանձնաժողովին:

19. Հանձնաժողովը 10 աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է նախարարության կողմից ներկայացված ակտերը և հանձնաժողովի նախագահին է ներկայացնում առաջարկություն՝ կենդանիների սեփականատերերին տրամադրվող փոխհատուցման գումարի չափի վերաբերյալ, հաշվի առնելով վիճակագրական կոմիտեի հրապարակումները:

20. Անկած, ոչնչացված կամ սանիտարական սպանդի (հարկադիր մորթի) ենթարկված գյուղատնտեսական կենդանիների սեփականատերերին տրամադրվող փոխհատուցումը հաշվարկվում է՝ գյուղատնտեսական արտադրանք արտադրողների կողմից իրացված մսեղիքի միջին գնի 55 տոկոսի չափով:

21. Սեփականատերերին ցուցաբերվող փոխհատուցումը տրամադրվում է, երբ առկա է լաբորատոր փորձաքննության եզրակացությունը հետևյալ հիվանդությունների՝

1) կատաղություն.
2) խոշոր եղջերավորների սպունգանման էնցեֆալոպաթիա.
3) խոշոր եղջերավորների, մանր եղջերավորների ժանտախտ.
4) խոզերի աֆրիկական ժանտախտ.
5) ձիերի աֆրիկական ժանտախտ.
6) մանր եղջերավորների Ռիֆտ հովտի տենդ.
7) մանր եղջերավորների Նայրոբի հիվանդություն.
8) ձիերի խլնախտ.
9) լաբորատոր փորձաքննությամբ չախտորոշված նոր վարակիչ՝ էմերջենտ հիվանդության դրսևորման դեպքում:

22. Սեփականատերերին տրամադրվող փոխհատուցման գումարի չափը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

23. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված փոխհատուցվող գումարը նախարարության կողմից տրամադրվում է տուժած սեփականատիրոջը՝ պայմանագիր կնքելուց հետո:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

06.06.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ